ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«03» մարտի 2020թ. N ՄՈ/61-2020

ք. Արմավիր

ԱՐՍԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով և հիմք ընդունելով 2020 թվականի փետրվարի 28-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կողմից տրված Արսեն Ղուկասյանի մահվան մասին N ԲԱ 228671 պետական վկայականը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի փետրվարի 25-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արսեն Ղուկասյանի որդի Նարեկ Ղուկասյանին տրամադրել միանվագ դրամական օգնություն մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ 416021 (չորս հարյուր տասնվեց հազար քսանմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ քաղաքացիական ծառայողի միանվագ դրամական օգնության ֆինանսավորումն իրականացնել աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների խնայողությունների հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/3/2020 11:47:27 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230